ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Թեմա՝ «Դարձվածքների ոճական կիրառությունը Հովհ. Թումանյանի պոեմներում՝ որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց»

Կատարող՝ 132 հիմնական դպրոց, Մարինե Սարգսի Բաղիկյան
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ Աշոտ Գալստյան, բ.գ.դ., պրոֆեսոր
Ազգանուն, անուն, գիտականաստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
ԳԼՈՒԽ 1«Դարձվածքների ոճական կիրառությունը Հովի. Թումանյանի պոեմներում՝ որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց»
1.1 Թումանյանի ստեղծագործությունների ազդեցությունը սովորողների արժեհամակարգի ձավորման վրա.....5
1.2 Հովի. Թումանյանի պոեմներում դարձվածքների ոճական կիրառություններն ու դրանց դաստիարակչական նշանակությունը.....10
Եզրակացություններ.....15
Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկայական կրթական չափորոշիչները ուսումնական գործընթացում գիտելիքաստեղծ գործունեությունից զատ սահմանում են նաև սովորողների արժեհամակարգի ձևավորումը բոլոր ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի, այլև սեփական կենսափորձի և այլոց կենցափորձի ուսումնասիրության հիման վրա: Աշակերտների արժեհամակարգը ձևավորելու, նրանց բարձր մարդկային որակներով օժտելու լայն հնարավորություններ է ստեղծում գրականությունը: Առհասարակ, բարոյական սկզբունքների վրա ձևավորված արժեհամակարգը առանցքային նշանակություն ունի թե' անհատի, թե' հասարակության համար: Հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացը չի կարող բնականոն առաջ գնալ, եթե կարևորություն չտրվի աշակերտների դաստիարակության հիմնախնդրին:

Հայ գրականություն առարկայի ուսուցչի վրա ևս մեծ պատասխանատվություն է դրված, քանի որ գեղարվեստական գրականության մեջ կարելի է գտնել մի շարք հարցերի պատասխաններ, կարելի է սովորողներին առարկայական ու տեսանելի կերպով մատնացույց անել կյանքի լավ ու վատ կողմերը, մարդկային տեսակի ընդունելի ու դատապարտելի առանցքները: Հայ ժողովրդի բառ ու բանով, դարվածքներով հարուստ է մեծն Թումանյանի գրիչը: Նրա դերակատարումը այսօր էլ հույժ կարևոր է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում: Թումանյանի ստեղծագործություններն ունակ են կյանքի լավ ու վատ կողմերը ցույց տալ սովորողներին, ուղղորդել նրանց:

Այսպիսով, գրականության ուսուցիչը, Թումանյանի գեղարվեստական մնայուն արժեքները վկայակոչելով, կարող է աշակերտի մոտ ձևավորել արժեքային համակարգ, որի հիմքը բարությունն է, ազնվությունն ու բարոյականությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հովհ. Թումանյանի ողջ ստեղծագործական ժառանգությունը մեծագույն դպրոց է սովորողների մեջ բարձր արժեքներ ձևավորելու տեսանկյունից: Գրողի, հասարակական ու ազգային գործչի վաստակը, նրա ոսկեղենիկ ու դարձվածքներով հարուստ գեղարվեստական ժառանգությունը կարող է սովորողների համար դառնալ հայրենասիրության, մարդասիրության, բարոյական բարձր արժեքների ձևավորման ակունք, ուստի և

թումանյանական գաղափարախոսության կարևորության շեշտադրմամբ էլ պայմանավորված է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել մեծն Թումանյանի գրական ժառանգության դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում, ընդգծել այդ ստեղծագործությունների օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտություն խնդիրը: Ուսումնասիրել Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների դերը մատաղ սերնդի կրթության, դաստիարակության և վերջիններիս արժեհամակարգի ձևավորման գործընթացում՝ առանձնակի ուշադրության տակ առնելով դարձվածքների ոճական կիրառությունը հեղինակի պոեմներում:

ԳԼՈՒԽ 1 «ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ»

1.1 Թումանյանի ստեղծագործությունների ազդեցությունը սովորողների արժեհամակարգի ձավորման վրա

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացը տեղի է ունենում ոչ միայն ընտանիքում, այլ նաև սոցիալական միջավայրում՝մասնավորապես ուսումնական հաստատություններում: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

«Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը»[1]: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը»[2]:

«Գրականություն» ուսումնական առարկայի դասաժամը նույնպես լավ հնարավորություններ է տալիս ուսուցչին դրական ու արժեքավոր սերմեր տալ սովորողին: Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է փորձի համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորի ստեղծագործական ու քննադատական մտածողություն, գեղարվեստական գրականությունից վերցված կյանքի այլևայլ իրավիճակների օգնությամբ սովորողներկի համար ստեղծի այնպիսի իրավիճակներ, որոնցում վերջինս ստիպված է մտածել, որոնել, փնտրել, դասդասել, հատկանշավորել, կարծիք ու դիրքորոշում հայտնել: Գրականության դասավանդման շրջանակներում դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի՝ գաղափարի օգտագործման վրա:

Դպրոցականների արժեհամակարգի ձևավորման գործում անգնահատելի են Թումանյանի ստեղծագործությունները: Բանաստեղծն ինքն էր օժտված մեծագույն մարդկային, բարոյական, հումանիստական, ազգասիրական արժեքներով, և անհնար է այս արժեքները չնկատել իր իսկ ստեղծագործություններում: Թումանյանի գրական անգին ժառանգության մեջ առանցքային տեղ են գրավում դպրոցին, ուսուցչին և մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վերաբերող հարցերը, որոնց մեջ բարձրացված գաղափարներն այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը:

Թումանյանն այն եզակիներից էր, ով համարում էր, որ պարզ ու մաքուր գրականությունը, դրա մեջ լավի բարու գովերգումն ունակ է բարձր արժեքներ սորմանել մատաղ սերնդի մեջ: «Կարծում են հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը, դա ամենադժվար գործն է, երեխայի հոգու հետ գործ ունես, պարզ ու հասկանալի պիտի տալ, զգույշ ու նուրբ պիտի մոտենալ, գեղեցիկ ու անպայման ճաշակով պիտի հրատարակել»- ասել է բանաստեղծը: Թումանյանական խոսքը տարիք չի ճանաչում. արդեն միջին դպրոցում ավելի խորքային ուսումնասիրելով մեծն բանաստեղծի գրական ժառանգությունը՝ սովորողներն արդեն ուրիշ աչքերով են նայում

[2] Նույն տեղում՝ հոդված 27,կետ 3:

բանաստեղծի գաղափարներին, ավելի հասուն ու խորքային են ընկալում ու հասկանում գրողի կոչերը, հորդորներն ու կյանքի դասերը: Հայրենաճանաչության, հայրենասիրության, մարդասիրության, լավի, բարու, պարկեշտի ու ազնվության օրինակներն անսպառ են թումանյանական պոեզիայում: Նրա մաքրամաքուր գրականությունը մեծապես ներգործում է դեռահասության տարիքի սովորողների՝ աշխարհի նկատմամբ ունեցած պատկերացումների վրա: Ամեն մի ստեղծագործություն ունակ է մի նոր արժեք, մի կարևոր դաս տալ սովորողին, ստիպել վերանայել սեփական վարքը, սկզբունքներն ու համոզմունքները: Մարդկային ազնիվ գծերից մեկը Թումանյանը համարում է հայրենասիրությունը: Նա հայրենասիրության դաստիարակման առաջնային գործոն է համարում իր ժողովրդի դարավոր պատմության իմացությունը, հայրենաճանաչությունը, որին էլ ծառայեցնում էր իր անմահ գործերից շատերը, ինչպիսիք են՝ «Հայրենիքիս հետ», «Հայոց վիշտը» «Հայոց լեռներում» բանաստեղծությունները: Անշուշտ, սրանք եզակի բանաստեղծություններ չեն հայրենասիրական ոգով տոգորված: Թումանյանը ապրել է մեր ժողովրդի համար ծարագույն պատմական ժամանակաշրջանում, և իր ստեղծագործությունների մեջ միշտ էլ փորձել է գովերգել մեր պատմական փառավոր անցյալը, մեր հզոր ու պայքարող տեսակը, գալիք սերունդներին ցույց է տվել կրթության հարկը՝ նպատակ ունենալով բարձր արժեքներ փոխանցել վերջիններիս իր գրականության միջոցով: Հայրենասիրական թեման ամփոփելու ժամանակ ուսուցիչը անպայման անդրադառնում է Թումանյանի ծավալած հայրենասիրական գործունեությանը և նշում, որ թումանյանագիտության ամենից քիչ ուսումնասիրված բնագավառը գրողի հասարակական գործունեության բնագավառն է: Երկար ժամանակ շրջանցել են ազգային, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մեծ բանաստեղծի ծավալած վիթխարի գործունեությունը: Իսկ առանց դրանց չենք կարող ամբողջական պատկերացում կազմել Թումանյանի մասին: Մշտապես լինելով ծավալվող իրադարձությունների կենտրոնում՝ ամենայն հայոց բանաստեղծը աշխատում էր թեթևացնել հայոց ծանր վիշտը[3]:

[3] https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/danielyanlyudmila.pdf Լ. Դանիելյան, «Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները եվ անձնական օրինակը որպես հայրենասիրական դաստիարակության միջոց», էջ 469:

Թումանյանը աչք է բացել և տեսել իր սիրելի ժողովրդի անազատ, ծանր աղետներով լի կյանքը: Նա այն հանճարներից է, ովքեր դիմագիծ են տալիս իրենց ծնող ժողովրդին: Ամենայն հայոց բանաստեղծն իր ստեղծագործություններում անկրկնելի արվեստով արտահայտել է հայ ժողովրդի բնավորությունը, հոգեբանությունը, մտածելակերպը, նվիրական իղձերն ու գեղեցիկի ձգտումը, աշխարհի մասին պատկերացումները: Իր գեղջուկ հերոսների մեջ էլ նա հայտնաբերել է հավերժ մարդկային ու ընդհանրական հատկանիշներ՝ հաստատելով այն ճշմարտությունը, որ արվեստում ու գրականության մեջ համամարդկայինն ստեղծվում է ազգայինի միջոցով:

Հովհ. Թումանյանի հայկականության իր զգացողության մասին սքանչելի է ասել Ստեփան Զորյանը. «Նրա ստեղծագործության մեջ ես միշտ զգում եմ հայրենի հարազատություն, հայրենի երկրի ու բնության պատկերը, հայրենի դաշտերի ու լեռների բուրմունքը, հայ ժողովրդի ապրած խոր վշտերն ու կարճատև խնդությունները և, վերջապես, մեր մայրենի լեզվի պարզ, վճիտ ու տիրական ձայնը, որն ինձ հիշեցնում է մեր լեռներից իջնող և իր շուրջը հաճելի զովություն ու կենդանություն առաջացնող շողշողուն մի վտակ»[4]: Ազգային ինքնաճանաչումը, սեփական առավելությունների և թերությունների պարզաբանումը, դրանց իմացության հիմքով անհատի և հանրության կյանքի կազմակերպումը այսօր էլ հիմնարար խնդիր է ամեն մի ազգի համար: Ավելին՝ դրա կարևորությունը քսանմեկերորդ դարում ակնհայտորեն առավել սաստկացել է ժամանակակից գլոբալացմանն ուղեկցող մշակութային համահարթեցման վտանգի պայմաններում[5]:

Թումանյանը իր հրապարակախոսական երկերում քննադատել է տգիտությունը, խավարամտությունը, բարձր գնահատել կրթությունն ու արժանապատիվ ուսուցիչներին: Այս ամենին գեղարվեստական ձև տալով՝ ստեղծվել են նրա բազմաթիվ հեքիաթները, պոեմներն ու բանաստեղծությունները, որտեղ կարմիր գծով դատապարտվել են մարդկային արատները, կաղապարված ու ազգային արժեքների ու ավանդույթների տակ քողարկված ադաթները, մարդկային հիմարությունը, տգիտությունը, սուտը, դավաճանությունն ու խարդախությունը: Մարդու բարոյական վսեմ հատկություններից է աշխատասիրությունը: Թումանյանը նշում է, որ մարդու

---

[4] Ստեփան Զորյան, «Իմ Թումանյանը» (հոդվածներ, ելույթներ, հուշեր), Երևան, 1969, էջ, 31:

[5] http://www.ysu.am/files/01V_Mirzoyan-1558613314-.pdf Վ. Միրզոյան, «Հովհաննես Թումանյանը ինքնաճանաչման մասին», էջ 14:

բարոյական հատկություններից է համեստությունն ու աշխատասիրությունը: Հենց այդպիսին էր մեծն բանաստեղծը: Նա ազնիվ էր իր ընթերցողի հետ, նրա ամեն մի բառը բխում էր իր սրտից ու հոգուց, Թումանյանը ոչինչ չէր հորինում, նա գրում էր իր ապրումների ու զգացմունքների մասին: Ամենայն հայոց բանաստեղծն իր ստեղծագործություններում խարազանել է փառասիրությունն ու մեծամտությունը, ցույց տվել բարոյական տեսակետից դրանց վնասակար հետևանքները ասելով, որ դրանք մեծ մասամբ ինքնաճանաչողության պակասից է:

Դիմելով երեխաներին, ասում է. «Դուք պետք է ճանաչեք ձեզ. իրեն ճանաչելը ամենամեծ հաղթանակն է: Չպետք է մեծամտել. երեխայի ամենամեծ թշնամին մեծամտությունն է ներքին կարողության»[6]**:** Թումանյանին կամքի ուժ տվող կարևոր հոգեբանական-մանկավարժական գործոններից մեկը լավատեսությունն էր: Նրա ստեղծագործությունները սովորողներին ուժ ր կամք են տալիս, նրա հերոսներն ուղղորդում են, սովորեցնում, զգուշացնում, մատնացույց անում արատներն ու կյանքի վատ կողմերը: Մեծ բանաստեղծի արարչագործության ակունքները ժողովրդական բանահյուսության մեջ են, այստեղից է նաև հարուստ բառապաշարը, առածների ու ասացվածքների, առակների ու ավանդությունների զարմանահրաշ իմացությունը:

Ծնվելով Լոռվա բնաշխարհում, ապրելով մեծ նահապետական ընտանիքում՝ Թումնայանը սնվել է մարդկային բարձր արժեքներով, մաքրամաքուր բնության ու առաքինի մոր՝ Սոնայի տված բանահյուսական գոհարներով, հայ ժողովրդի բառ ու բանով, երգ ու զրույցով: Դաժան կյանքի երախն ընկնելով՝ Թումանյանը չի հանձնվել, երբեք չի գոռոզացել իր վաստակով, չի դավաճանել չի խաբել: Այդպես է դաստիարակել, թե' իր տասը զավակներին, թե' իր ընթերցողներին, ովքեր էլ նրան հայրիկ են կանչել:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հասարակության կորիզը առողջ, արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական քաղաքացին է: Իսկ այդ բարդագույն խնդրի լուծման ճանապարհին Թումնայանի խոսքն ու գաղափարներն իսկական օգնություն են ուսուցչին , քանի որ իրենց մեջ ունեն վեհ գաղափարների գովերգում, վատի ու արատավորի դատապարտում:

[6] https://www.grakantert.am/archives/12211 Թումանյանի ասույթները, Գրական թերթ, 15. 02. 2019:

1.2 Հովհ. Թումանյանի պոեմներում դարձվածքների ոճական կիրառություններն ու դրանց դաստիարակչական նշանակությունը

Գեղարվեստական խոսքի հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ ունի գեղագիտական արժեք: Գրողի գերխնդիրն է իր ստեղծագործության միջոցով ազդել ընթերցողի հոգեկան աշխարհի, զգացմունքների վրա: Այստեղ է, որ գրողին օգնության են հասնում լեզվի ոճաարտահայտչական հնարավորությունները: Հենց այս հնարավորություններով է պայմանավորվում այս կամ այն գրողի ինքնատիպությունը, նրա ձեռագիրը: Գրողի խոսքարվեստի քննությունը պարզում է բանաստեղծի մտածողության ինքնատիպ մի գիծ, որն այս կամ այն չափով նկատելի է նրա ստեղծագործության բոլոր շրջաններում: Խոսքը բանաստեղծական հակադրության մասին է, երբ իրար են հակադրվում մտքեր, գաղափարներ, պատկերներ, որոնք առաջին հայացքից թվում են անբնական, տարօրինակ, բայց նկատելի է բովանդակային այն հարստությունը, որը թաքնված է դրա ետևում:

Գեղարվեստական ստեղծագործությունների լեզվի և իմաստի ոճավորման առումով մեծագույն դերակատարում ունեն դարձվածքները: Դրանք խոսքը ոճավորող, խոսքին սեղմություն, հակիրճություն, հուզաարտահայտչական երանգ, վերաբերմունքային լիցք հաղորդող լեզվական միջոցներ են, որոնց ուսումնասիրության առաջին քայլը հայ լեզվաբանության մեջ կատարել է Մ. Աբեղյանը՝ դարձվածք համարելով իմաստային փոփոխության ենթարկված, վերաիմաստավորված կայուն կապակցությունները, բառերի «նորիմաստ կապակցություններ»[7]: «Կարճ ու դիպուկ լեզվական այս միավորները ազգային լեզվամտածողության ամենակուռ ու ամենապատկերավոր արտահայտություններն են» [8]: Ա. Սուքիասիանն էլ դրանք բնորոշում է այսպես. «Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր[9]: Դարձվածքներն արտացոլում են ժողովրդի լեզվամտածողության ինքնատիպությունը, ազգային մտածողությունը: Ամենայն հայոց բանաստեղծը նույնպես դիպել է դարձվածքների օգնությանը՝ խոսքը ոճավորելու, դիպուկ ու պատկերավոր դարձնելու

[7] Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 151:
[8] Խ. Բադիկյան. Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 14
[9] Ա. Սուքիասյան, «Ժամանակակից հայոց լեզուն», Երևան, 1999, էջ 296:

նկատառումներից ելնելով: Այսպիսի լեզվական ոճավորումների հանդիպում ենք նաև Թումանյանի պոեմներում:

Դիտարկենք Թումանյանի «Անուշ» պոեմի դաստիարակչական նշանակությունն ու դարձվածքների օրինակները՝ որպես պոեմի լեզվի ոճավորման միջոց: Պոեմի նյութը վերցված է գյուղական կյանքից . դեպքերը տեղի են ունենում Լոռիում: Պոեմը կառուցված է նախերգանքից ու 29 երգից: Նախերգանքում նախապատրաստվում է գալիք ողբերգությունը: Պոեմի I, II, III մասերում Թումանյանը վերհիշում է Լոռու բնությունը, մարդկանց, խոսում իր սիրո ու կարոտի մասին, իսկ IV-ից մինչև վերջ՝ Անուշի և Սարոյի սիրո մասին է: Անուշն ու Սարոն սիրում են իրար: Մի հարսանիքի ժամանակ Սարոն, տեսնելով Անուշին, մոռանում է օրենք ու ադաթ, գետին է զարկում ընկերոջը՝ Մոսիին, Անուշի հետ փախչում սարերը: Մոսին սպանում է Սարոյին, Անուշը նետվում է Դեբեդ գետը, իսկ արդեն պոեմի ավարտին երկնքում են հանդիպում:

Պոեմում ներկայացված են ժողովրդական մի շարք սովորույթներ՝ հարսանիքի, թաղման, Համբարձման (ջանգյուլում) տեսարաններում: «Հայոց բանաստեղծությունն այն խոչ չէ, որի մեջ Հայաստանի ու հայի անուն կա, որի մեջ ազգասիրության քարոզներ կան, Մասիս ու Արաքս կա, այլ այն, որի մեջ հայի հոգի կա, հայի շունչ կա, հայի վիշտ կա, հայի ուրախություն, հայի սովորություն, հայի զգացմունք»[10]:

Այսպիսով, ժողովրդի կյանքն ու բարքերը, խոսքն ու զրույցը, բառ ու բանն է իր ստեղծագործությունների միջոցով սերունդներին փոխանցել բանաստեղծը՝ դառնալով ժողովրդի հոգսերի ու վշտերի, հույզերի ու հույսերի թարգմանը: Գրականության հասարակական դերի այս բարձր գիտակցումն է, որ Թումանյանին դարձրեց ամենամեծ ու ամենաժողովրդական բանաստեղծը, որի հանճարի լույսով սերունդներ են դաստիարակվել ու պիտի դաստիարակվեն:

Ուստի և ժողովրդի կյանքի թարգման Թումանյանն իր ստեղծագործություններու հաճախ է կիրառել խոսքի ոճավորման հնարներ, որոնց թվում էին նաև դարձվածքները: Պոեմի հիմքում դնելով սիրո մի ողբերգական պատմություն՝ Թումանյանը վերակերտեց մի ամբողջ աշխարհ, ինքնաբուխ շարժման մեջ դրեց նահապետական կյանքն՝ իր ներքին օրենքներով ու հակասություններով, իր գրավիչ ու ողբերգական կողմերով: Ահա թե ինչու «Անուշին» անդրադարձող բոլոր գրականագետները միաբերան

[10] «Հովհ.Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ», Երևան,1969, հատոր 2, էջ 299:

հաստատում են, թե նահապետական կյանքի դառնություններն ու ժողովրդի հոգու գեղեցկություններն ուրիշ ոչ մի ստեղծագործության մեջ չեն հասել այնպիսի կատարելության, ինչպես «Անուշ» պոեմում: Ահա թե ինչու ռուս հայտնի բանաստեղծ, հայ պոեզիայի քաջագիտակ Վալերի Բրյուսովը «Անուշն» անվանել է հայկական կյանքի հանրագիտարան:

Դիտարկենք պոեմում առկա դարձվածքներն ու հասկանանք, թե ինչ ազդեցություն ունեն դրաք պոեմի ոճականության նաև ընթերցողին հասցվող գաղափարական նշանակության ամբողջացման վրա: Ահա Անուշի մայրը՝ աղջկա անխոհեմ քայլերը կանխելու մտահոգությամբ, պարկեշտության հորդորներով, նրա բախտի նկատմամբ մշտական տագնապով:

Ու ելավ տեղից պառավը հանկարծ.
— Ո՞ւր կորար, Անո՛ւշ, այ մազըդ կըտրած…
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անահ զավակին:
— Աղջի՛, սևասի՛րտ, քու ահը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կմըտնի.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՞նչ ես կորցրել՝ չես կարում գըտնել…[11]

Այստեղ դիպուկ է «մազդ կտրած» դարձվածքը, որն ավելի հուզական ու պատկերավոր է դարձնում նախատինքը, խորացնում դրա նշանակությունը: Սերը մարդկային ամենավեհ ու ամենաբուռն զգացումն է: Ճշմարիտ սերը չի հանդուրժում կիսատ-պռատություն, այն, Թումանյանի բնորոշմամբ, «ագահ է ու տարօրինակ», պահանջում է անմնացորդ ու անվերապահ նվիրում: Անուշի տագնապած հոգին այդպիսի սեր է պահանջում Սարոյից, այլապես՝

Ես կըվառվեմ, Հուր կըդառնամ,
Ես կըհալվեմ, Ջուր կըդառնամ,
Ես չըգիտեմ՝ Ինչ կըդառնամ,
Թե որ մին էլ էսպես մընամ…[12]

Հուր կըդառնամ, ջուր կըդառնամ, սրանք նույնպես կարելի է տալ դարձվածքի նշանակություն, քանի որ խորացնում է զգացմունքայնությունը, խոսքը դարձնում

[11] Հովի. Թումանյան, «Պոեմներ», հատոր 3, Երևան, 1989, էջ 86:
[12] Նույն տեղում՝ էջ 87:

շարժուն ու նկարագրական: Այսպես հերոսուհու փոթորկված ապրումներն առավել առարկայական են դառնում:

Համբարձման ծեսը դառնում է պոեմի համակարգը միավորող կոմպոզիցիոն բաղկացուցիչը՝ յուրօրինակ բեմական տարր, որտեղ ծավալվում, որի մեջ «առնվում են» ճակատագրով կանխատեսված գործողություններ: Սյուժետային արտաքին մանրամասները ներքին թելերով և կանխագուշակման տարրերով միահյուսվում են Համբարձման տոնի խորհրդին: Նվարդ Թումանյանի վկայությամբ Համբարձումը եղել է Թումանյանի ամենասիրած տոնը, այդ է պատճառը, որ տոնի առանցքը կազմող և ոչ մի մանրամասն չի վրիպել հեղինակի ուշադրությունից. «Առավոտ վաղ վեր էր կենում, պահարանից հանում էր բոլոր՝ մոտ երկու տասնյակ մեծ ու փոքր ծաղկամաններ, լցնում հատկապես դաշտի ու սարի պեսպես ծաղիկներով և դնում սենյակների բոլոր սեղաններին ու անկյուններում: Այս օրվա հետ կապված զանազան ավանդություններ էր կարդում, ջանգյուլումի քառյակներ ասում: Երբ տրամադրությունը լավ էր լինում ու ժամանակ էր ունենում՝ վիճակախաղ էր բացում: Սեդիկն էր վիճակ հանողը»[13]: Եթե սրան էլ ավելացնենք հեղինակի անկեղծ խոստովանությունները մանկության տարիներին Լոռվա աստղազարդ երկնքի տակ պառկելու և գուշակություններ անելու վերաբերյալ, ապա պոեմի կառույցի հիմնական գծերն ու հոգեբանական ազդակները պարզ կդառնան: Այս հատվածում ևս կգտնենք դարձվածքների կիրառության դրսևորումներ, օրինակ՝ բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ, խնդում են սրտեր, մուրազը սրտում մնալ, մատաղ սիրտ,ջիգյարին գյուլլա դիպչի, սևաբախտ քուրիկ, ձեռդ կոտրի, բախտ չունենալ, բաժին ուզել,մութ սիրտ[14]: Թումանյանը, «Անուշ» պոեմում օգտագործելով լեզվի բանավոր, խոսակցական տարբերակին բնորոշ լեզվական այդ միջոցները, աշխուժություն է հաղորդել խոսքին: Հերոսներին բնութագրող որոշ դարձվածքներ հուզաարտահայտչական հարուստ երանգ են տվել խոսքին՝ որոշակի վերաբերմունք դրսևորելով գործող անձանց նկատմամբ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ դարձվածքները խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են, «խոսքի աղն ու համեմունքը» և դրսևորվում են բոլոր տեսակի ոճերում: Առանձնապես մեծ է դարձվածքի դերը գեղարվեստական գրականության մեջ: Դարձվածքների միջոցով հաճախ խոսքն ազատվում է չորությունից ու երկարաբանությունից՝ իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալով

[13] Ն. Թումանյան, «Հուշեր և զրույցներ», էջ 45:
[14] Հովհ. Թումանյան, «Պոեմներ», հատոր 3, Երևան, 1989, էջ 90-92:

դիպուկություն ու կենդանություն: Թումանյանն էլ իր ընթերցողին ասելիքը դիպուկ հասցնելու նպատակով բավականին հաճախ է դիմել այդ ոճավորման ձևին:

«Անուշ» պոեմի դաստիարակչական նշանակությունը մեծ է նաև՝որպես ուսումնական նյութ: Հարկ է, որ պոեմի ուսուցման ժամանակ սովորողը հնարավորություն ունենա խորությամբ հասկանալու թե սյուժեն, թե գաղափարը, և հեղինակի ասելիք տարաժամանակյա հարթության մեջ, քանի որ թումանյանական խոսքը երբեք չի հնանում, այն հավերժ է և ունակ է դաստիարակչական մեծ ներգործություն ունենալ, ձևավորել մատաղ սերնդի բարոյական պատկերացումներն աշխարհի ու մարդկանց մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտության արդյունքում եկանք այն եզրահամգմանը, որ ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից: Գրականության ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի, որևէ կերպ չպետք է պարտադրել սովորողին սեփական կարծիքը, հարկավոր է ամեն կերպ խթանել վերջինիս ինքնուրույնությունն ու քննադատական մտածողությունը: Հարկավոր է ու շատ կարևոր գեղարվեստական գրականության մեջ առկա դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել:

Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման կիրառի ժողովրդավարական սկզբունքներ, պահպանի բարոյահոգեբանական միջավայրը կայուն: Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար: Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք: Հարկավոր է գիտակցել աշակերտի մեջ բարձր մարդկային որակներ՝ արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն ձևավորելու կարևորությունը: Այս ճանապարհին, վստահաբար, շատ կօգնի հայը, գրողը, մարդը, քաղաքացին, հայրենասերը, հումանիստը՝ մեծն Թումանյանը, ով իր հայրական պատգամներով, դիպուկ ու ժողովրդական բառ ու բանով, դարձվացքներով հարուստ ստեղծագործություններով այսօր էլ կանգնած է մատաղ սերնդի դաստիարակության գործի ակունքներում: Պետք է գիտակցենք, որ Թումանյանն իսկապես եզակի էր, հանճար...

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՞չ ուշացած, ծնվում են նրանք ճի՞շտ ժամանակին

Եվ ժամանակից առաջ են ընկնում, դրա համար էլ չեն ներում նրանց: ***Պ. Սևակ***

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/danielyanlyudmila.pdf Լ. Դանիելյան, «Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները եվ անձնական օրինակը որպես հայրենասիրական դաստիարակության միջոց»:
3. Ստեփան Զորյան, «Իմ Թումանյանը» (հոդվածներ, ելույթներ, հուշեր), Երևան, 1969:
4. http://www.ysu.am/files/01V_Mirzoyan-1558613314-.pdf Վ. Միրզոյան, «Հովհաննես Թումանյանը ինքնաճանաչման մասին»:
5. https://www.grakantert.am/archives/12211 Թումանյանի ասույթները, Գրական թերթ, 15. 02. 2019:
6. Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
7. Խ. Բադիկյան. Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000:
8. Ա. Սուքիասյան, «Ժամանակակից հայոց լեզում», Երևան, 1999:
9. «Հովհ.Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ», Երևան,1969, հատոր 2:
10. Հովհ. Թումանյան, «Պոեմներ», հատոր 3, Երևան, 1989:
11. Ն. Թումանյան, «Հուշեր և զրույցներ»:
12. Հովհ. Թումանյան, «Պոեմներ», հատոր 3, Երևան, 1989: